

ԿԱՊՈՒՏԱԶԵԱՅ ՀԱՅՐԵՆԻՔ!

ԵՂԻՁԷ ՉԱՐԵՆՑ

Prolog

...Երգեցի մի իրիկուն՝ երբ հոգիս լեփ-լեցուն եր
երազներով եւ արեւով՝

Այնտեղ, մեռնող օրւայ արնաթաթախ հայեացքում
ես տեսայ յանկարծ հեքանոս Հարսանիքը կապուտաչեայ
Սիրունուս—

Հայրենիքս...

Ես սիրում եմ նստել ամեն իրիկուն
 պատուհանի մոտ ու նայել հեռեւում
 պահուող, խափող նամփաներին անունուն,
 որոնք այնքա՛ն հմայուն են, գրաւում:
 Նայել կանաչ հովիտներին՝ Արեւի
 մեռնող կարմի՛ր համբոյրներով սիրարքած.
 խմել անցնող երանգները վերելի՛
 երջանկացած ու հարքած:
 Ականջ դնել ցորենների շուկիւն,
 որ պատմում է Հողի մասին մեղմօրէն—
 ու վերանա՛լ, մինչ երգ դառնայ իմ հոգին,
 մինչ լոյսերը մթնած հոգիս օրօրեն:
 Ես սիրում եմ նստել մենակ ու անձայն,
 աչքերս յառել անվերջ պահուող երազին,
 լսել ձայնե՛ր, որ մի գիշեր սրբացան
 հովիտների մէջ այս հին:
 Ապրել՝ հարքա՛ծ իրիկնային գոյներով,
 ապրել՝ հարքա՛ծ աղբիւրների կարկաչում.
 հարբե՛լ, հարբել՝հարբեցումն իսկ մոռնալով,
 եւ հաւատալ, որ հեռուից Քալսն է կանչում...

II.

Կայ հոգեկան լեցունութեան մի վայրկեան,
երբ ամեն ինչ սուր է թում ու անբիծ,
երբ դիւային խարխափումներ էլ չկան,
երբ դառնում են ուղեւորները նամբից...
Դուռս բաց է, դուռս բաց է ձեզ համար,
ի՛մ եղբայրներ, բարեկամներ ու քոյրեր.
անա վառել եմ նրազներս անմար
եւ ուզում եմ ձեզ պարզօրէն համբուրել:
Սեղանս՝ առաս՝ սպասում է ձեր գալուն.
մայրս արդէն պահապան է հաց ու միս.
չհաւաստի սուերների դողալուն—
գիշերն հիմա կգուրգուրի ամենիս...
Մայրս կօրհնի իմ սուրբ սեղանն անապակ,
մայրս կօրհնի ձեր գալուսը անխառն.
Եւ իմ ծեր մօր յալահառայ երգի սակ՝
նամփայ կընկնե՛ք իրիկնային մեռւում...

III.

Օ, սրբազան, կապուսաչեա՛յ Սիրունիս! —
Հովիտի մէջ փրփրուն գետն էր հոսում
Եւ անդադրում պասմում էր ինձ, որ ունիռ
Դու գգուանքներ ու գրկանքներ սիրասուն:
Այնտեղ, կանաչ ու ծաղկաբուս գետափին
Տնակս այնքա՛ն գեղեցիկ էր ու անբիծ:
Լսում էի ալիքների գէջ ծափին,
որ ինձ պասմում էին էջեր մեծ նամբից:
Ալիքների հազարաձայն երգի մէջ
Ես գիտէի գուշակել Քո ապագան.
Եսում էի կարօտերգերդ անվերջ,
Եսում էի խոսումներդ. — Ես կգա՛մ:
Ուրի՛ն, բարդին ու թթենին մեղմօրէն
պասմում էին ներմակահազ ջրերին,
որ սիրել եմ Քեզ մի գիշեր տմօրէն՝
սիրով անհուն, սիրով անմեռ ու խորին:
Ախ, իմ Տնակս ու իմ Այգիս հայրական՝
գետի ափին իմ Երազը սխրամած...
Ե՛րբ է, ե՛րբ էր, որ ասացիր. — Ես կգամ —
Եւ ձայնակցին քեզ տեսներդ կամաց...:

IV.

Օ, սրբազան, կապուսաչեայ Սիրուհիս!—
 Հովիտի մէջ փրփրուն գետն էր հոսում
 եւ պասմում էր, որ հմայներ Դու ունես,
 որ աստերը միտ Գո մասին եւ խօսում:
 Ես չգիտեմ, ես չգիտեմ թէ արդեօք
 Աղջիկ ես Դու, թէ այն Տնակն ու Այգին,
 որ սիրել եմ ես կարօտով անամոք,
 որ պատել եմ՝ հլու Գո սուրբ հմայիկն:
 Բայց ես գիտեմ, որ սիրեցի Քեզ մի օր,
 երբ թթեմու լալաւառայ երգի սակ
 լսեցի իմ կարօտիս ձայնն հպաւոր՝
 որ թւաց մի մեռած բախդի յիշատակ...
 Բայց ես գիտեմ, որ կտեսնեմ Քեզ մի օր—
 եւ կլինես Դու իմ անբիծ Հարսնացուն...
 Կերջանկանամ ու կը խնդամ բախսաւոր՝
 օրհներգելով իմ հեթանոս Աստուն:
 Աներեւոյթ, կապուսաչեայ Սիրուհիս!
 Գիշերների սխուրթեան մէջ լուսինկայ՝
 ես հասկացայ, որ պերճանքներ դու ունիս—
 եւ մեն-մենակ լոյս համփաներդ ընկայ...:

V.

Որոնումիս ու փնտումիս մեծ համփին
չյոզնեցի, չյոզնեցի ես երբէք.
համփաս լուռ էր, համփիս՝ աստէր ու լուսին,
որ ինձ ժպտում էին սէ՛գ:
Գնո՛ւմ էի լուսաւորւած իմ համփով
ես միայնակ ու սքսում:
Միայն կարօս էր հէփաթում հոգեթով
երազանքներ անպատում:
Երազօրէն սայլս օրօրում էր հանդարս՝
համփաների ամայութեան մէջ մթին.
հօ՛յ-հօ՛յ, —ես ուխտ էի զնում իմ բախտին —
ես սքսօրէն նիրհում էին լեռ ու արս...
Ո՛չ գիշեր էր, ո՛չ ցերեկ —այլ երկուսն էլ միասին
փարւել էին ու ֆնել՝ որպէս երկու ամուսին...:

VI.

Եւ յո՛ւո էր այնտեղ: Հեռու-հեռուում
 մի ինչ-որ հի՛ն, հի՛ն վանի էր երեւում:
 Փայլում էր ոսկի կասարը Խաչի՛
 որպէս վերամբարձ թռիչք հառաչի:
 Ճամփան ոլորան՝ իջնում էր վա՛ր, վա՛ր,
 դէպի ձորերի գիրկը, ուր չկար
 ո՛չ մարդկային հետք, ոչ մարդ արարած՝
 երազ էր կարծես՝ յանկարծ կեանք դառած:
 Եւ յանկարծ մութը գրկեց ամեն ինչ.
 կարծես չի եղել—չի՛ լինի ոչինչ:
 Աղամայ մութը գրկեց ամեն բան—
 եւ եւ կորցրի Հին Վանքի նամբան:
 Եւ յո՛ւո էր այնպէս: Ոչ ոք չէր խօսում:
 Գետակն էր հեռուում տաղտալէն հոսում:
 Եւ սպասում էր լեռ, հովիտ ու քար—
 կարծես թէ մէկը այցի պէտք է գար:

VII.

Եւ ահա՛ յեռան ձիւնապատ կողից
բարձրացաւ յանկարծ մի յուսաւոր ձեռք.
Ժողիկներն յանկարծ ժպտացին հողից,
որ հագա՛ր թագուն գանձ ունի ու բերք.

Եւ այդ յուսաւոր ձեռքը Արեւի
պատնէց խաւարի մորթին անթափանց.
առանց արցունքի, առանց բարեւի
հեռացաւ այն գող Խաւարը վաղանց.

Եւ անո՛ւշ, անո՛ւշ կանչը զանգերի
աւետեց ներկան մօտիկ Վանքերի....:

VIII.

Օ, հինաւորց Վանի! Հայրերիս բազին!
Ուր նրանց կնդրուկն է սուրբ մխացել...
Ողջունում է Քեզ իմ սրտում հոգին,
որ սիրում է Քո վեհութիւնը ծեր:
Ես այստեղ եկայ: Աղօթո՛ւմ, յայտն՛վ
անցայ իմ համփան՝ ամայի ու սին.
Տափքի՛ հոգիս չմարող լոյսով՝
Փարւած Մեծ Յոյսին:
Ողջո՛յն, Վանահայր! Եկել եմ անա
Վանիիդ մէջ հոգուս էն աղերսելու.
Խո՛ւնկ դիր մխացող բուրվառիդ վրայ,
որ ես աղօթեմ՝ սրտօրէն-հիւ:
Այս պատերի մէջ — ես գիտե՛մ, իիտե՛մ —
ապրում է Հոգիս՝ կոյս ու անապակ.
Լոյս աղօթներով ես գուցէ գտնեմ
Նրա Հրաւի դարբասները փակ:
Մտնում եմ անա Վանիիդ մէջ: — Հոգիս
գոհելու այն Մեծ Հրաւի համար.
— օ, կապուսաչեայ, անբի՛ծ Սիրունիս!
— օ, ասւածային հրաւերների Մայր!

IX.

Հինաւուրց Վանֆի կամարների սակ,
 ուր մի սրբազան, անիմանալի
 Գոյութեան նախրում կայիլուն ու պարտիակ—
 Ես ծունկ չոճեցի՝ աղօթքներով լի:
 Թէկուզ չվառուեց տօնական բոյրով
 ջահը վերելի, ջահը հազարաչ.
 թէկուզ չխնդաց երկնամերձ բոյրով
 օժած խորանի վարագոյրը խաչ.
 թէկուզ ո՛չ մի երգ չլսեց Վանֆի
 այն հազարամեայ գմբէթների մէջ—
 բայց ես զգացի մի խոր բերկրանֆի,
 բախտաւորութեան ու սիրոյ վայրէջ:
 Հասկացայ յանկարծ, որ այս հինաւուրց
 Վանֆի մէջ Նրա շունչը կայ անանց՝
 որպէս երբեմնի դիւթող, հոգեցունց
 ժպիտ անապակ ու թախծող կանանց:
 Հասկեցայ, որ այս գմբէթների սակ
 հսկել է Նա իմ երազներիս էն—
 Եւ սուրբ Երազիս դիւթանֆին գիտակ՝
 աղօթել է լուռ, լացել սրտօրէն:
 Եւ հասկացայ, որ ուխտս ապարդիւն
 չի՝ անցնի երբէ՛ք—կգայ, կլինի...
 Եւ ժպտում էր ինձ խորանը սրտում—
 խորանը ցաւի, սուգի, արիւնի:

X.

Օրհնուած լինի Սիրուհիս զահէլ,
օրհնուած լինի Սէրս ասուածային,
որ հոգուս խորում անմար է պահել,
նեմա՛կ Հայրենի՛ք, Քո հմայքը հին.

Օրհնուած լինի Տնակն այն հեռու
եւ Գեսն ու Այգին, որ մի իրիկուն
պասմեցին հոգուս հմայքն ապրելու
եւ աղօթելու՝ լայսերի՛ն թագուն!

Օրհնուած լինիս եւ Դո՛ւ, գթառաս
Ասուած! -- Օրհնութի՛ւն արեւի՛դ, հովի՛դ!
Օրհնութի՛ւն եւ Քեզ, իմ սո՛ւրբ, անարաս,
զահէ՛լ, իմասուն, Հայրենի Հովիս!..

XI.

Վանից դուրս եկայ գինով ու լեցուն,
հաւասո՛վ, սիրով ու յոյսով հսկայ.
զոհս թողեցի իմ սէզ Աստուն—
հազար երազով նորից տուն եկայ:
Երբ վանահօր հետ բաժանում էի
նա մեղմ համբուրեց հակասս ջահէլ.
—Հաւասա, որդի՛, հարսնի՛ք կլինի,
Հարսնի՛ք բերձառա՛ս, աստածավայել!..
Զի՛ անցնի, ասաց, մի ֆանի սարի—
Կօրհնեմ սեղանիդ լիութիւնն անափ
Եւ դու կլինդաս՝ անսահման բարի...
Օ, հոգու ինճոյ՜! Օ, երագի՛ ծափ!..
—Կօրհնեմ Հարսանի՛քդ այնքան սպասած.
յոյսերի՛ Հարսնի՛ք, յոյսերի՛ Հարսնի՛ք...
Ուխտդ ապարդիւն չի՛ անցնի, ասաց!
—Օրհնա՛ծ լինիս, առա՛ս Հայրենի՛ք!

XII.

Վերադարձայ տուն...

Վայրկեանն՝ իմասուն՝ եկել է ահա.
Ուղարկել է Մայրս հնձուրներն արդէն
Եւ ինքը մեռել՝ հէք շէմփս վրայ...:

Ուղարկել է Մայրս հնձուրներն արդէն:
Ես մենակ նսած սպասում եմ լուռ:
—Ճերմակ Սիրունիս!— Ես գիտեմ, գիտեմ,
որ նրանք հիմա հնձում են սխուր:

Գիտե՞ս, սրտուքեան մէջ աւելի խոր
ուրախաթիւն ու բեկրանք կայ հոգու՝
էլ ինչո՞ւ է սիրսս այսֆա՛ն բախտաւոր,
էլ ինչո՞ւ է ցան այսֆան ամոհում!

Հնձում են հիմա հնձուրներն այնտեղ:
—Ճերմակ Սիրունի, կապուտաչեայ Քոյր!—
Արեւը հիմա այրում է այնտեղ
հնձուրների սէգ կրծքերը մաքուր...

Իսկ ես սրտօրէն սպասում եմ լուռ՝
վերադարձների բերառատ ժամին.
—օ, անապակ Քոյր, օ, լուսաւոր Քոյր!—
—Այնտեղ, երեսի, քրչո՛ւմ է քաւին...:

XIII.

Օ, ոսկեգիրկ, արեւաւա՛ս Հայրենիք!
Ես, Քո որդին, Քո զաւակը անառակ—
պատրաստել եմ խրախիւսանքի մի ընթրիք՝
վառելով սէրս՝ որպէս լուսին ու ճրագ:
Իրիկնամուրթն արդէն իջաւ դաւսերին.
հնձուրները, վաստակաւոր, կզան տուն.
թող կուտես ուտեն սեղանիս բերքն ու ֆնեն,
եւ թող խնդա՛ ճրագիտ լոյսը արթուն:
Օ, սրբագան, արեգնագան Հայրենիք!
Ես ջանէ՛լ եմ՝ սիրո՛վ, սիրո՛վ լեփ-լեցուն.
ունեմ հազար զոհաբերում ու բարիք
Քո գրկառաս ու հեքանոս Աստուծոն:
Հունձք կանցնի: Հաւաքելով ամեն ինչ՝
ամեն ժպիտ, ամեն արցունք ու բարիք՝
տուն կը դառնան մեր հնձուրները ֆիչ-ֆիչ
եւ կօրհնեն Քեզ, Կապուտաչեա՛յ Հայրենիք!

XIV.

Կապուսաչեա՛յ Սիրունիս, ամուսնա՛նք պիտի մենք!
Արեւի սակ— հայրենի հովիտներում կանաչուն.
Վաղը, վաղը գինառաս հարսանիքը կըսօնենք.
Կապուսաչեա՛յ Սիրունիս! —մեզ ասուածներն են
կանչում!
Հովիտներում հայրենի, հովիտներում սրբազան
վաղը կայ մի հարսանիք, մի հարսանիք գինեծոր.
հրաւիրել եմ արդէն ես աղջիկներ սիրասուն՝
որոնց ձայնից կուսական խնդալու՛ են սար ու
ձոր...
Գինիներ՝ եմ ես բերել, հիւթե՛ղ, հիւթեղ ու կարմիր
որպէս երազն արիւնիս, որպէս հոգուս զոհը հիր:
Սէգ ծաղիկներ կան բերած հովիտներից բազ-
մեքանց.
հարսանիքիս խնճոյքին փսփսալու են նրանք
առասպելներ՝ ապրւած, առասպելներ՝ դիւրական՝
անցորդների մասին, որ մի օր անցան ու չկան:
Եւ որսեր եմ ես բերել՝ անճառներում զարնւած՝
ներմակ, ներմակ, որպէս ձիւն՝ երկնքի մէջ սեր-
մըւած:
Խաղողներ կան սեղանիս, որ փողի են կոյս
ձեռքեր՝
երբ ուզեցել է փսփն նրանց գովը սիրեցել:
Եկէ՛ք, եկէ՛ք, հարսնիքիս օրն այնքան երգ կլինի,
այնքան կարկաչ ու ծիծաղ, այնքան ցնծանք
արիւնի:
Եկէ՛ք, եկէ՛ք, մօտեցէ՛ք արեւառաս սեղանիս.
Կերէ՛ք բերքերն՝ իմաստուն ողջակէզներն Եղանիս՝
որ բերել է հայրենի հովիտներից բախտաւոր...
Կերէ՛ք հացերս իմաստուն՝ որպէս ճօրի ուխտաւոր:
Եկէ՛ք, եկէ՛ք, — սրբազան հովիտներում հայրենի
վաղը մի սուրբ Խրախնանք, մի Հարսանիք կը
լինի...: